# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

## Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N 825-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

## Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութուն

## Իրավական ակտի տեսակ

Որոշում

## Ոլորտ

Սոցիալական ապահովություն

## Հանրային քննարկման ժամկետ

06/02/2026 - 23/02/2026

## Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**24/02/2026**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 825-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Կարգավիճակ | Առաջարկության բովանդակությունը | Կցված փաստաթղթեր | Եզրակացություն | Դրույթ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Ժորա Հայրապետյան<br>19.02.2026 12:11:27 | | Հարգելի նախարարություն Ձեր կողմից մշակված ծրագրերում և որոշումներում բոլոր 18 - 63 տարեկան անձանց ովքեր չունեն 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն դիտարկում եք աշխատունակ սակայն կան դեպքեր երբ | | «Անապահովության գնահատման համակարգով անապահով ճանաչված ընտանիքների աշխատունակ անձանց վարձատրվող հասարակական աշխատանքի դիմաց աջակցության տրամադրման» ծրագրում կարող են | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | քաղաքացին չի հանդիսանում հաշմանդամ սակայն դատարանի դատական ակտով գտնվում է այլ անձի խնամքի և նշված անձին պարտադրում եք, որ գա տարածքային ՄՄԾ ու հաշվառվի որպես աշխատանք փնտրող:<br><br>Խնդրում եմ հայտնեք եթե անձը դատական ակտով գտնվում է այլ անձի խնամքի տրամաբանական է այդ անձին դիտարկել որպես աշխատունակ: | | ընդգրկվել «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման համակարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի **աշխատունակ** այն անձինք, որոնք Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | աջակցությամբ ընդգրկված չեն զբաղվածության պետական այլ ծրագրերում: | | |